ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԴԱՐՊԱՍԸ՝ ՄԵՂՐԻ

ԳԱԳԻԿ ԽԱԼԱՖԵԱՆ



Մեղրիի բերդը

Մի պահ պատկերացնենք որ չի եղել զօրավար Նժդեհի գործունէութիւնը եւ Մեղրին Արցախի ու Նախիջեւանի հետ միասին Հայաստանից անջատուել ու կցուել է Ադրբեջանին: Նման դէպքում, իմ խորին համոզմամբ Հայաստանի քաղաքական արժէքը կը հաւասարուէր զրոյի: Մեղրին թրի պէս փակել է թուրանական ձգտումների ճանապարհը, Նախիջեւանն անջատել է Ադրբեջանից, ցամաքային կապ է Իրանի հետ, այստեղով է անցնում արեւելքն ու Արեւմուտքը կապող երկաթուղին: Վերջին հանգամանքն էլ ի դէպ ստիպում է ադրբեջանցիներին շրջափակումները սահմանափակումներով իրականացնել, քանի որ այս դէպքում փակւում է նաեւ դէպի Նախիջեւան, Իրան եւ արեւելեան պետութիւններ գնացող գնացքների երթեւեկութիւնը: Ուրեմն փառք Աստծոյ, Հայաստանի ամենահարաւային շրջանը Մեղրին է: Շրջանն ունի 13-15 հազար բնակիչ, որից հինգական հազարը բնակւում է Մեղրի քաղաքում ու Ագարակ բանուորական աւանում, իսկ մնացած բնակչութիւնը տեղաբաշխուած է շրջանի 12 գիւղերում:

Մայրաքաղաքի հետ կապը ներկայումս անմխիթար վիճակում է: 2 ամիս է, որ չեն իրականացւում ուղղաթիռային թռիչքները, երկաթուղայինը՝ վերջին յայտնի դէպքերից յետոյ աշխատում է շատ անկանոն եւ այս ծառայութիւնից օգտուելն էլ մեծ համարձակութեան հետ է կապուած:

Մեղրուց Երեւան աւտոբուսային երթուղի չկայ եւ մայրաքաղաք մեկնել ցանկացողները վաղ առաւօտեան ինչ որ կերպ պէտք է հասնեն Քաջարան, որտեղից մեկնող միակ աւտոբուսում մեղրեցիներին յատկացւում է ընդամենը 18 տեղ: Երեւանից Մեղրի հասնելու դժուարութիւնների մասին չեմ խօսում:

Աւելի լաւ է Մեղրուց գնալ հասնել քեզ անհրաժեշտ վայրը, քան թէ փորձել տուեալ տեղի հետ կապուել հեռախօսով: Որ կողմ շրջուես՝ չլուծուած ընկերային խնդիրների հետ էս բախւում: Լուծած չէ խմելու ջրի հարցը, Ագարակաւանը չունի այնքան անհրաժեշտ իր հասարակական բաղնիքը, ամբողջովին փախստականաբնակ Ագարան մէկ տարուց աւելի է, չի դիտում հեռուստացոյց, ռադիոհաղորդումներ չի լսում: Համարեա ընդհատուած են Շինուհայր-Նիւադի նոր աւտոմայրուղու շինաշխատանքները, ինչը բացատրւում է տեխնիկայի պակասով եւ եղածի անսարքութեամբ: Երկար ժամանակ շարունակում է անպատասխան մնալ շրջխորհրդի ժողովրդական պատգամաւորների կողմից շրջխորհրդի նախագահին ուղղուած Մեղրի քաղաքում հողի սեփականաշնորհման հարցը վերանայելու խնդրով արտահերթ նստաշրջան հրաւիրելու պահանջը: Փոխարէնը շրջխորհրդի նախագահը վերջերս իր վրայ էր վերցրել շրջան ուղարկած 50 զոյգ «Սալամանդեր» ֆիրմայի տղամարդու ձմեռային կօշիկների բաշխման հոգսը: Այսօր, երբ թէեւ դեռ որեւէ շօշափելի գործ չի արուած Իրանի հետ Մեղրու ճանապարհով կապուելու, հանրապետութեան համար յոյժ անհրաժեշտ հարցում, այնուամենայնիւ հէնց այս խնդրի հետ կապուած մեծապէս կարեւորւում է Մեղրուց Քաջարան երկաթուղային գծի անցկացման պրոբլեմը: Այս շինարարութիւնը թէեւ ճիշտ է սկսուել է, բայց մտավախութիւն կայ թէ այն կարող է արժանանալ շրջանում ձեռնարկուած նոյնատիպ այլ շինաշխատանքների ճակատագրին, երբ մեծամասշտաբ ծախսումներից յետոյ դրանք կիսատ են թողնուել, մոռացուել են, որպէսզի այնուհետեւ մի նոր գործ սկսեն:

Արժէ յիշատակել նաեւ, այն մասին, որ շարժման սկզբներից ցուցաբերած իր համարձակ դիրքորոշման շնորհիւ Մեղրին կարողացել էր, արժանի ընդդիմութեամբ հակադարձել ադրբեջանական ոտնձգութիւններին, սակայն վերջին շրջանի մեր խաղաղասիրական քաղաքականութեան հետեւանքով լկտիացած հարեւանները, աւազակային չդադարող յարձակումներ են գործում յատկապէս ճանապարհներով միայնակ երթեւեկող մեքենաների վրայ, իրենց հետ տանելով բազմաթիւ պատանդների: Երեւանում մըտահո՞գ են արդեօք այն բանից, որ արդէն մի քանի տարի է, որ կարեւորագոյն ռազմաստրատեգիական տարածքի պաշտպանութեան բեռն ընկած է վաշտի մի փոքր խումբ մարտիկների եւ տեղական ոստիկանութեան ուսերին, որոնք էլ չգիտեն գիշերային հերթապահութեամբ զբաղուեն, թէ տեղում պայքարեն վերջին շրջանում յանցագործութիւնների անանախադէպ աճի դէմ: Աւելացնեմ որ դեռ այս պայմաններում փորձ է արւում վերացնելու տեղի աշխարհազօրային ինքնապաշտպանական խմբերը: Վերը յիշատակուած եւ շատ այլ պրոբլեմների լուծումը կապուած չեն Հայաստանի Հանրապետութեան այսօրուայ ծանր վիճակի հետ ու աւելի շատ յուշում են շրջանում տեղական իշխանութեան եւ դրա հետ կապուած հանրապետական կառավարման լծակների իսպառ բացակայութեան մասին: Երեւի պատահական էլ չէ, որ վերջերս մի շարք հանրապետութիւնների տարբեր գերատեսչութիւններից շրջան ուղարկուող նամակների ծրարների վրայ նշւում է «Հայաստանի Ինքնավար Խորհրդային Հանրապետութիւն»:

Համայնապատկեր Մեղրիից

Մեղրիում վերջերս մեծ յուզումի տեղիք տուեց Գորիս-Ղափան մայրուղու Թասի լեռնանցքի վերջում անյայտ զրահամեքենայի կողմից «Կամազ» բեռնատարի հետ նրա երեք ուղեւորների կալանումն ու դէպի Ադրբեջանի տարածք առեւանգումը: Չմոռանանք որ մեղրեցին էլ ունի լեռնեցու իր բնաւորութիւնը որը որ կարող է յանկարծ...